ԽԻԿԱՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Գլխուս վրայ – Ես քուկին սպասաւորդ չեմ։

Ո՞ւր տեսնուինք վաղը – Կ'ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել։

Կբողոքեմ – Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ'ընել քեզ։

Սուրճ մը կ'առնէ՞ք – Գործ ունիմ, բաներնիդ գացէք։

Չէք երեւար կոր – Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա։

Կխոստանամ – Բան մ'ալ չեմ կրնար ընել։

Կրնանք քիչ մը տեսնուիլ – Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ։

Ի՞նչ է մեր հաշիւը – Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ'ալ համբերէ։

Աղան դուրս չելներ կոր – Հիւր ընդունելու ժամանակ չունինք։